Հաստատում եմ՝ ԼԵՌՆԱՐՈՏԻ ԳԵՂԱՋԱՋՆԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ

ԼԵՌՆԱՐՈՏԻ ԳԵՂԱՋԱՋՆԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 6-րդ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հարությունյան Հասմիկ Աշոտի

Դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

<< 2023- 2024>>ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ_ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 4 աշակերտից, որոնցից 4-ը աղջիկ են: Ուսման նկատմամբ աշակերտներն ունեն դրական վերաբերմունք և ճանաչողական գործունեության նկատմամբ կայուն հետաքրքրություն: Աշակերտներն ակտիվ են, նախաձեռնող և ստեղծագործ: Աշակերտների մեծամասնությունը ակտիվորեն մասնակցում է համադպրոցական, արտադպրոցական միջոցառումներին: Դասարանական կոլեկտիվում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ: Դպրոցում ամրապնդել են իրենց տեղն ու դերը:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ա)Վերահսկե լաշակերտների ուսումնական գործընթացը, օգնել հաղթահարել ուսման ընթացքում ծագած դժվարությունները, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ, կազմակերպել խորհրդատվություններ:

բ)Համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ կատարել սովորողների ուսումնական գործունեության շարժառիթների ուսումնասիրություն:

գ)Զարգացնել սովորողների կամային հատկանիշները և սեփական ուժեղ ու թույլ կողմերի նկատմամբ քննադատական մտածողությունը: Անցկացնել ինքնազարգացման գործնական աշխատանքներ, այդ ուղղությամբ համագործակցել ծնողների, մանկավարժների հետ՝կիրառելով համագործակցության տարբեր ձևեր:

դ) Ինտերակտիվ խաղերի, բանավեճերի, քննարկումների միջոցով սովորողի մեջ զարգացնել քաղաքացու այնպիսի որակներ, ինչպիսիք են՝կամավորությունը, համագործակցությունը, հանդուրժողականությունը, քննադատական մտածողությունը, բանավիճելու հմտությունը, ինքնուրույն որոշումներ կայացնելը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Սովորողների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Ամրապնդել սովորողների մոտ և ձևավորել մարդասիրական աշխարհայացք: Ազգային դիմագիծը պահպանելու քրիստոնեական հավատով ձեռքբերած հոգևոր արժեքները պահելու և սերունդներին

հայեցի դաստիարակելու համար օգտվել մերազգային ավանդույթներից, ծեսերից, տոներից:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Աշակերտների մեջ զարգացնել գեղեցիկը մարդու, բնության, արվեստի մեջ տեսնելու ու գնահատելու կարողություններ: Կազմակերպել մշակութային միջոցառումներ, էքսկուրսիաներ՝ շփվելու գեղեցիկի դրսևորման զանազան ձևերի հետ:

3.3. Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն Աշակերտների մեջ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք ֆիդայիների և հարազատ մարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Զրույցների, Արցախյան հերոսամարտում ծնված երգերի կատարումներով ու բանաստեղծությունների միջոցով նպաստել հայրենասիրական դաստիարակությանը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Սերտորեն համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ, ներգրավել նաև ծնողների և երեխաների համար կազմակերպվող թեմատիկ խորհրդատվություններին, կապված երեխաների ֆիզիկական առողջության պահպանման խնդիրների հետ: Անցկացնել քննարկումներ սանիտարահիգիենիկ պահանջների անձնական հիգիենայի և այլ թեմաների շուրջ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Դասասենյակում, դպրոցի բակում, տանը, շրջակա միջավայրի մաքրման աշխատանքների կազմակերպում: Զրույցների օրինակների միջոցով աշակերտների մեջ սերմանել որոշակի աշխատանքներ կատարելիս, ծնողներին օգնելու ցանկության ձգտում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Կարևորել շրջակա միջավայրի պահպանության խնդիրը: Զարգացնել էկոլոգիական վարքը, մասնակից դարձնել բնապահպանական միջոցառումներին, հոգալ շրջակա միջավայրի մասին: Կազմակերպել քննարկում մարդու փոխհարաբերությունը աղտոտված շրջակա միջավայրի հետ, նրա ֆիզիկական և հոգևոր առողջության պահպանման հիմնախնդիրները:

4. ԴՊՐՈՑ_ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ Ծնողական կոմիտեի և նախագահի ընտրության, անհատական և թեմատիկ խորհրդատվությունների, ծնողական ժողովների սեմինարների կազմակերպում: Ապահովել սովորողների ուսումնական

գործունեության վերահսկումը ծնողների կողմից, որն էլ ավելի կնպաստի աշակերտների և դասավանդող ուսուցիչների արդյունավետ համագործակցությանը:

շաբաթներ	**Զրույցի թեմաներ**	**կատարող**
1	Զրույց «Գիտելիքը կյանքում» :	դասղեկ
2	Ընտրել դասարանի ավագ , աշակերտական խորհուրդ:	
3	Զրույց «Կարգապահական հիմնախնդիրներ» թեմայով:	
4	Անկախության 32 ամյակին նվիրված զրույց:	
5	Զրույց «Իմ ուսուցիչը» թեմայով:	
6	Զրույց «Բնության պահպանություն»:	
7	Զրույց «Մեր երկրի հերոսական անցյալը » թեմայով:	
8	Զրույց «Ինչպիսին պետք է լինի իսկական ընկերը» թեմայով:	
9	Էքրսկուրսիա բուսաբանական այգի	
10	Զրույց Իմ իրավունքն է.....:	
11	Զրույց «Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ մեր դասարանում» թեմայով:	
12	Զրույց «Ճանապարհորդություն դեպի երազանքների երկիր» թեմայով:	Դասղեկ աշակերտ
13	Բնական աղետներ երկրաշարժեր	
14	Իմ իրավունքներն ու պարտականությունները:	
15	Ամանորյա միջոցառում:	
16	«Առողջ ու անվտանգ ապրելակերպ»:	
17	Զրույց «Բանակի 32 ամյակին նվիրված» թեմայով:	
18	«Ո՛չ վտանգավոր սովորություններին»:	
19	«Հանդուրժողականություն և բարություն»:	
20	«Տեառնընդառաջ տոնի խորհուրդը»:	
21	Հ. Թումանյան ամենայն հայոց բանաստեղծ, մեծ մանկագիր, հեքիաթագիր: Գիրք նվիրելու օր: Մայրենի լեզվի միջազգային օր:	Դասղեկ աշակերտ
22	Բնական աղետներ՝ արտակարգ իրավիճակներում ճիշտ դրսևորելու և դրանցից խուսափելու համար հրդեհային իրավիճակ:	
23	Զրույց տոնների մասին, բացիկների պատրաստում:	
24	«Մայրության և գեղեցկության տոն»:	
25	«Սուրբ զատկի տոն»:	
26	«Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր»: Մոմավառություն:	
27	Մարդիկ, որոնց հանդիպում եմ ամեն օր:	
28	Ինչն է մեզ շրջապատում:	
29	Մայիսյան տոներ:	

30	«Հաղթանակների ամիս մայիս»:	
31	«Քաղաքավարություն և բարկրթություն»:	
32	Ինչ տվեց ինձ ուսումնական տարին:	
33	Ուսումնական տարվա ամփոփում: Էքրսկուրսիա	
34	Առջևում ամառ է, ամառվա ընթացքում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ հանձնարարականներ:	